19. ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՏԵՐՏԵՐԸ

Տերտերի մեկը թագավորի աչքին դուր չէր գա։ Թագավորը գուշեր տերտերին ըռագ էնել մեջտեղեն, հնար ման գուքար։ Եվ էդ հնարը գտավ։ Մի օր կանչեց քովը, ըսավ.— Տերտեր, ես քեզի իրեք բան տի ըսեմ, թե կըրնացիր պատասխանե՞, կազատվիս, թե չէ՝ գլոխգ զարկել կուտամ։

Տերտերն ըսավ.—Թագավորն ապրած կենա, ես թագավորի ծառան եմ, պատրաստ եմ, ըսա, էնեմ։

Թագավորն ըսավ.— Առաջին հարցըս էս է՝ էրկնքեն հարի գետինը քա՞նի արշին է, երկրորթը՝ ես ի՞նչ ածեմ. երորթը՝ մըտքինըս ի՞նչ է։

Տերտերը գլոխը կախեց, շվարավ մնաց։ Վերջը գլոխ տվավ, ժամանակ խընթրեց։ Թագավորը իրեք օր ժամանակ տվավ։ Տերտերը գնաց։ Շատ մըտածեց, չը կըրաց հընարը գտնի։

Մե չախչըպանըմ տեսավ օր տերտերը շատ միտք կէնե, ըսավ.— Տերտե՛ր, էդ ի՞նչ միտք կէնես։

Տերտերը ա՞խ քաշելով ըսավ.— Բա չես ըսե, թագավորը ընձի իրեք հարց է տվե, չեմ կըրնա պատասխանը տա։

Չախչըպանն ըսավ.— Ի՞նչ հարց է տվե։

Ըսավ.— Թագավորն ըսել է տիմանաս՝ էրկընուց հարի գետինը քա՞նի արշին է, ինքը ի՞նչ ածե, մըտքինն ի՞նչ է։

Չախչըպանը քիչըմ միտք էրավ, ըսավ.— Տերտեր, ես հընարքը

գտաւ։ Քու տեղրդ իղին սու, էրթամ թագավորի պատասխանը տամ։

Իրեք օրեն ետև տերտերի ֆարաշա-մարաշան հաքավ, գավաղանն առավ ու դրնաց թագավորի կուշտը.— Թագավորն ապրած մրնա,— ըսավ,— հընարքը գտաւ։

Թագավորն ըսավ.— Դե ըսա տեսնիմ,— ըսավ,— երկնքեն հարի դեռտինը քա՞նի արշին է։

Ջախչրպանն ըսավ.— Թագավորը սաղ մնա. էրկնուց հարի գեռտինը իրեք հարուր վացցունը վեց ու կես արշին է։

Թաղավորն ըսավ.— Չի էղնի, ախպեր, իրեք հարուր վացցընը օխար արշին կէղնի։

Ըսավ.— Չէ՛, ղուզ իրեք հարուր վացցընը վեց ու կես արշին է, թե չես ալաաա, չվանիս ծերը բռնե, էլի վիրև, չափենք։

Թագավորը միտք էրավ, միտք, ըսավ.— Ախպեր, հանեցիր։— Ըսավ,— Դե հիմի ըսա, ես ի՞նչ ածեմ։

Ըսավ.— Թաղավորն ապրած կենա, ի՞նչ պիտի ածես, Քրիստոսն օր սուտծու տղեն էր, Նոեսուն արծրթի ծախին. դու շա՞տ շա՞տ ածենաս, աասէրկու—տասնըհինդ արծաթ ածես։

Ըսավ.— Ախպեր, էդ էլ հանեցիր։ Մնաց մեկը, ըսա, մրտքինըս ի՞նչ է։

Ըսավ.— Թագավորը սաղ ըլնի, դու մրտքիդ մեշը կըսես՝ էս մարթը էն տերտե՞րն է, թե ուրուշ մարթ է։

Ըսավ ու շորեր-մորերը հանեց։ Թագավորը տեսավ օր էս մարթը իրեն ըսած տերտերը չէ, ըսավ.— Ապրիս, դու ճիշտ գտար,— ու բուռրմ օսկի տվավ, ըսավ,— գնա՛, հալալ էղնի ծնունդրդ ու ծծած կաթրդ։